



ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ա. ՏԱՐԻ

ՄԻՇԵԼ ԶԵՅԹՈՒՆԼԵԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ա. ՏԱՐԻ

Բ. Տպագրութիւն



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՄԻԱՑՆԵԱԼ ՁԵՌՆԱՐԿ
ԼԻՔԱՆԱՆԻ ԹԵՄԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳԻ

ԵՒ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.— Դպրոցը	7
2.— Տունը	9
3.— Որմադիրը եւ շինութեան նիւթեր	12
4.— Գիշեր եւ ցերեկ	15
5.— Տափ եւ պաղ	18
6.— Օղը	25
7.— Շնչաւոր եւ անշունչ	29
8.— Անասուններ	34
9.— Անիլ — մեծնալ	51
10.— Հինգ զգայարանները	56
11.— Արմտիքներ	70
12.— Բանջարեղէն	72
13.— Պտուղներ	77
14.— Ծառեր	80
15.— Ժամացոյց	84

ՅԱՌԱԶԱԲԱՆ

Բնական երեւոյթ է փոքրիկներուն մօտ խուզարկու միտք եւ հետաքրքրութիւն ունենալը իրենց անմիջական շրջապատին հանդէպ: Այս երեւոյթին գոհացում տալու, ինչպէս նաեւ յղկելու համար անոնց նաշակը, պէտք է զարգացնել անոնց դիտելու կարողութիւնը եւ ուղղել անոնց միտքը, որպէսզի ընեն նիշդ վերլուծումներ եւ հասնին նիշդ արդիւնքներու:

Այս նպատակը իրագործելու համար անհրաժեշտ է ունենալ ուսուցման անհրաժեշտ միջոցները, որոնց առաջինը դասագիրքն է. պայմանաւ որ դասագիրքերը պատրաստուած ըլլան մանկավարժական աշխատանքին եւ գիտութեան ծրագրին ամբողջական նպատակներուն գոհացում տալու ձգտումով:

Մեկնելով այս մտահոգութենէն՝ այս դասագիրքի պատրաստութեան առթիւ ամէն նիգ ի գործ դրուած է. որպէսզի պարզ ու հասկնալի ըլլալու կողմին՝ ան ըլլայ նաեւ հանելի, անոր նիւթերը աշակերտին հրամցուին գիտական ու գործնական պարզաբանուած մօտեցումով եւ օժտուած ըլլան նոր, ինքնատիպ ու նոյս պատկերազարդումով:

Մանկավարժական վերոյիշեալ նպատակները իրագործելու համար յենած եմ փորձառութեանս, ինչպէս նաեւ այն գաղափարին, գոր վաստակաւոր ուսուցիչ պրն. Հրաչ Տասնապետեան յայտնած է իր դասագիրքերու շարքին յառաջաբանին մէջ, — «Զենք հաւատար տնային աշխատանքի մը հնարաւորութեան եւ անհրաժեշտութեան՝ 8էն 10 տարեկան տղոց համար, երբ այնքան բնական ու հասկնալի է խաղին պահանջը: Հետագային, նախակրթարաններու վերջին դասարաններուն մէջ, կարելի է աւելի խստապահանջ ըլլալ՝ տնային պատրաստութեան նկատմամբ»:

Այս իրականութենէն ու համոզումէն մեկնելով՝ նիւթին ուսուցման համար նկատի առնուած են.

— դասին ներկայացումը՝ հարցումներով, որոնք կը համապատասխանեն փոփրիկին մտային կարողութեան.

— փոփրիկին մէջ կարգ մը հմտութիւններ զարգացնելու անհրաժեշտութիւնը, ինչպէս՝ մատիտի նիշդ գործածութիւնը, նշանակուած սահմաններու մէջ ներկելու վարժութիւնը.

— տրամաբանութեան զարգացումը, որ կ'իրացուի բաղդատութիւններով եւ փորձերով:

Այս հատորին հրատարակութեան առթիւ շնորհակալական խօսք կ'ուղղեմ.

ա.— Պրն. Հրաչ Տասնապետեանին, որուն դասագիրքերը տասնամեակներ շարունակ իբրեւ ուղեցոյց եւ դասագիրք ծառայեցին մեր ուսուցիչներուն եւ աշակերտներուն. անոնցմէ օգտուեցայ ինքս ալ այս շարքի պատրաստութեան համար (կարգ մը գլուխներ մօտաւոր վերարտադրութիւններ են, ինչպէս նաեւ կարգ մը նկարներ):

բ.— Օրիորդ Վարդուհի Անդոյեանին, որուն հետ մշակեցի այս հատորին մէկ կարեւոր մասը:

գ.— Ազգային Ուսումնական Խորհուրդին եւ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան կեդրոնական վարչութեան, որոնք ազնիւ գաղափարը յղացած են հրատարակելու գիտութեան հայերէն դասագիրքերու այս շարքը:

Մ. Զ.